

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Նիւթապաշտութեան ոգին.—Ներողամիտ վերաբերմունք դէպի ճարպիկ գերփումները.—Հասարակական գումարներից օգտուելու ախորժակներ.—Իրական միջոցներ հասարակական գումարներ յափշտակող պարագիտների դէմ.—Հաշուետւոթեան և կօնտրօլի սկզբունքը.—Հին և նոր հայեացք պետութեան նպատակի մասին.—Նախ ծախքը, ապա եկամուտը.—Հին և նոր հայեացք պետական տնտեսութեան վրայ.—Հարկատու և հարկերից ազատ դասակարգեր.—Հարկերի արդար բաժանում.—Պետական արդիւնագործութիւն և առևտուր.—Պետական նախահաշիւ.—Ֆինանսների միջնորդի նախահաշիւը 1901 տարուայ համար.—Ոսկու քանակութեան նուազումը.—Հունձերի նշանակութիւնը արդիւնագործութեան և առևտրի ծաղկման համար.—Միլիտարիզմի բեռը.—Մտիպողական և կուլտուրական ծախքեր:

Գոյութեան կռուի ներկայ հիմքը մասնաւոր սեփականութիւնն է, և քաղաքակրթական բարիքներից օգտուում է նա, ով ապահով է նիւթապէս: Այդ այդպէս լինելով, ոչ միայն ունեւոր բուրժուան, այլ և գիւղացի ժողովուրդը շատ ներողամիտ են վերաբերում դէպի հարստանալու միջոցները: Թէ՛ կրեսոսի պալատում և թէ՛ գիւղացու խրճիթում դուք կը լսէք անվերջ պատմութիւններ այս կամ այն ճարպիկ գողի, խաբեբայի, կեղեքիչի, կեղծ սնանկացածի մասին և միշտ կը նկատէք մի առանձին յափշտակութիւն թէ՛ լսողների և թէ՛ պատմողների մէջ: Բաւական է, որ մէկին աջողուել է զանազան ճարպիկ խաբեբայութիւններով և մութ ճանապարհներով «փող դատել».—արդէն չուտով մոռացւում է նրա անցեալը և նա դառնում է իր չքապատողների հրճուանքի ու պատուի առարկան. միայն անաջողութեան դէպքում են ամեն կողմից յարձակւում, պախարակում գողին, վաշխառուին, խաբեբային: Հասարակական կարծիքը, այդ դէպքերում, թւում է, թէ աւելի զայրանում է յանցաւորի անշնորհութիւնից, քան բարոյական շարժառիթներից դրդուած... Նա, ով կարողանում է ճարպիկութեամբ խաբել, աննկատելի գողանալ—երբէք չէ գրգռում հասարակութեան ատելութիւնը: Կարելի է տեսնել վաշխառուներ, սպե-

կուլեանոս բանկիրներ, կեղծ սնանկացածներ, դրամանենդ վաճառականներ, հազար ու մի զեղծումներով հարստացած պաշտօնավորող անձեր, խարդախ կապալառուներ, որոնք ամենամեծ պատիւների են արժանանում, «բարերարների» անուն են վաստակում միայն այն պատճառով, որ կարողացել են մուրթ ճանապարհներով փող դիզել, սակայն... առանց դատաստանի ենթարկուելու: Նոյն իսկ «ինտելիգենտը» պախարակելի մի քայլ է համարում այդպիսի քաջագործ «մեծատուներին» հետ ամենամօտ կապեր հաստատելը... Սովորական բարոյական չափերը շատ թույլ են մաքառելու համար այդ ընդհանուր նիւթապատական հոսանքի դէմ: Կոմֆօրտ ունենալու և կեանքի վայելքները ճաշակելու տենչը այնքան զօրեղ է, որ նոյն իսկ հասարակական շահերի գաղափարը ինքն ըստ ինքեան անզօր է կանգնեցնելու հեշտ ճանապարհով փող զիզողներին:

Մամուլը համարեա թէ անզօր է մաքառել մասնաւոր յարաբերութիւնների մէջ կատարուող հազար ու մի մուրթ շահադիտական գործերի դէմ: Նրա դերը աւելի հեշտանում է, երբ հասարակական բնաւորութիւն է կրում սրա կամ նրա փորձը՝ յափշտակելու հասարակական կաջը: Այդպիսի պարազիտներից հասարակական սեփականութիւնը պաշտպանելու համար կան երկու իսկական միջոցներ. խիստ հաշուեհաշիւին եւ կօնքօլ ամեն մի հասարակական տնտեսութեան վերաբերմամբ: Ազատ մամուլը միշտ կարող է ազդպիսով երեան հանել չարագործներին: Անկասկած ամեն մէկը իր մասնաւոր տնտեսութեան վրայ անգամ կարող է համոզուել, թէ որքան անհրաժեշտ է մի տընտեսական գործի աջողութեան համար ճիշտ հաշուետուութիւնը և վերաստուգումը: Բայց տեսէք, որ այդ նոյն ճշմարտութիւնը կարօտ է շատ անգամ բացատրութեան, մանաւանդ անկարգ և կամայական ըէփիմների սիրահար անձանց համար, որոնց ձեռնտու է պղտոր ջուրը...

Թէ ինչ գաղանալին ախորժակներ կարող էին ունենալ մարդիկ դէպի հասարակական և պետական չաղ պատառները մի ժամանակ և Ռուսաստանում, այդ երևում է Գօգօլի անմահ նկարագիրներէից, օրինակ նրա «Բեվիզօրից» և «Մեռած հոգիներից»:

Գօգօլի ժամանակ ևս «հաշուետուութիւն ու կօնքօլ» կար, բայց—լուի իբրեւ ձեական, թղթի վրայ գոյութիւն ունեցող մի անզօր միջոց՝ սանձահարելու գանձարանի ցեցերին ու ժողովրդի կեղեքիչներին: Եւ միայն Ալեքսանդր Մ-րդի մեծ վերանորոգութիւններից յետոյ հաշուետուութիւնն ու կօնքօլը դառան իրական մի գործօն՝ հասարակական և պետական կանոնաւոր տնտեսութեան մէջ: Կայսրը ուղարկեց իր մերձաւոր

անձերից մէկին (Տատարինով) Եւրոպա, տեղն ու տեղը ուսումնասիրելու քաղաքակիրթ երկիրների պետական հաշուետուութեան ու կօնտրոլի կարգերը, կազմակերպութիւնը և գործունէութեան ձևը: Այդ նոր տիպի հաշուետուութիւնն ու կօնտրոլը իրապէս վերջացրին հին զեղծումներն ու գերփուսները, և միութիւն մտցրին պետական ելեմուտքի մէջ: Առաջ պետական ելեմուտքը դիւանական մի գաղտնիք էր, մինչդեռ Ալեքսանդր II-րդի հրամանով, 1862 թուից սկսած, միշտ յունուարի 1-ին հրատարակում է ի գիտութիւն հասարակութեան պետական նախահաշիւը: Այդպէս ահա, հաշուետուութեան և կօնտրոլի մեխանիզմը կանոնաւորելով և հասարակական կարծիքին աւելի մատչելի դարձնելով երկրի ֆինանսական քաղաքականութիւնը, նոր կառավարութիւնը, բացի այդ, նոր հայեաքը մըտցրեց պետութեան նպատակի մէջ:

Առաջ պետութիւնը իր նպատակն էր դնում միայն պաշտպանել երկիրը արտաքին թշնամիներից, պաշտօնեաների մի ահագին բանակի ձեռքով կառավարել հպատակներին, պատժել յանցաւորներին և, երկրի վարչութիւնն ու զօրքը պահպանելու համար, հարկ ժողովել միայն հասարակ ժողովուրդից: Մինչդեռ նոր հայեաքով պետութիւնը պէտք էր ոչ միայն արտաքին պաշտպանութեան մասին մտածէ, այլ և հոգ տանէ ժողովրդի կուլտուրական պահանջների մասին. նա պէտք է կրաւորական դիրք չը բռնէ ազգաբնակչութեան զանազան դասակարգերի տնտեսական յարաբերութիւնների մէջ, այլ ներդրածական դեր կատարէ—օգնելով ժողովրդի այն խաւերին, որոնք տնտեսապէս տկար են և չեն կարողանում իրանց սեփական ուժերով բարձրանալ դէպի լոյսն ու քաղաքակրթութեան բարեբնեւրը: Հարկի ծանրութիւնը այլ ևս չը պէտք է անէծքի նման ճնշէր միայն «հարկատու» դասակարգերը, այլ նա պէտք է դառնար ընդհանուր, և, բացի այդ՝ իւրաքանչիւր հպատակի հարկատուութեան կարողութեան համեմատ: Այլ ևս ամեն բան պաշտօնեաների հոգատարութեան չէր մատնուած: Այլ հասարակութիւնն ստանում էր որոշ ինքնավարութիւն՝ իր տեղական պետքերի մասին հոգալու համար: Եւ որովհետև ժողովրդի կուլտուրական պահանջների մասին ևս հոգալը դառնում էր պետութեան առաջնակարգ նպատակներից մէկը, ուստի անհրաժեշտ էր ոչ թէ եղած եկամուտների համեմատ որոշել ծախսերը, այլ ընդհակառակը—նախ ծախսերն ի նկատի ունենալ և ապա հոգ տանել, որ դրանց ծածկելու համար միջոցներ հայթհայթուեն:

Այդ տարբերութիւնը պարզ է: Հին հայեաքն ասում էր.

ահան քեզ այսքան մի գումար և տուր ինձ այս ինչ հիմնարկութիւնները, թէկուզ կիսատ-պատ. մինչդեռ նոր հայեացքը յայտնում էր թէ—այս ինչ հիմնարկութիւնը կանոնաւոր վիճակի մէջ դնելու համար անհրաժեշտ է այսքան. ուրեմն—հոգացէ՛ք այդ անհրաժեշտ գումարը գտնելու մասին:

Այդ վերջին տեսակէտով օրէցօր բարդացող պետական կեանքը, օրէցօր աճող ժողովրդական ինքնագիտակցութիւնը պահանջում են առաձգական ու անընդհատ աւելացող միջոցներ: Անշուշտ չէր կարելի յոյս դնել ուժասպառ եղած հարկատու դասակարգերի վրայ, քանի որ պետութեան տուած կուտուրական բարեքններից օգտուողները հէնց ունևոր, բայց հարկերից ազատ դասակարգերն էին: Արդարութիւնը և ինքը կեանքը պահանջում էին թեթևացնել հասարակ ժողովրդի ուսերից նրա ծանր բեռը և հարկատուութեան մասնակից անել աւելի ունևոր կամ արտօնեալ դասակարգերը: Բայց այդ դեռ բաւական չէր. պետութիւնը պէտք է հարկերից դուրս էլ եկամուտների աղբիւրներ ունենար. պօստը, հեռագիրը, փող կտրելը և պետական կալուածները արդէն տալիս էին որոշ եկամուտներ, բայց այդ միջոցներով անկարելի էր ծածկել անագին ծախսերը և իրագործել մի շարք ծրագիրներ: Եւ ահա պետութիւնը դառնում է նաև արդիւնագործ, առևտրական. երկաթուղիներն անցնում են պետութեան ձեռքը, ոգելից խմիչքների առևտուրը դառնում է պետական մենաշնորհում:

Պետական տնտեսութեան մէջ այդ նոր ուղղութիւնը պահանջում էր տնտեսական գիտութիւնների մէջ հմտութիւն ունեցող անձանց ղեկավարութիւն: Եւ արդարև, 1881 թվւից ֆինանսների մինիստր է նշանակւում Կիեվի համալսարանի պրոֆեսօր Բուռգէն, որ սկսում է Ռուսաստանի կեանքի մէջ կամաց-կամաց իրականացնել Ալեքսանդր II-ի ծրագրած տնտեսական վերանորոգումները: 1883 թուին վերացւում է Եւրոպական Ռուսաստանում գլխահարկը *): Այդ կարգադրութեան շնորհիւ թեթևացաւ ժողովրդի ուսերի վրայ ծանրացած բեռը: Ծօրտութեան վերացումից յետոյ, որ հիմնովին փոփոխեց երկրի տնտեսական կեանքը, ուսւ գիւղացիները իրաւունք ստացան իրանց հողաբաժինների սեփականատէր դառնալ, սակայն որոշ տուրք վճարելով. պակասացրուեց և այդ տուրքը 12 միլիօնով: Միւս կողմից առանց անձնական աշխատութեան՝ Ժառանգաբար կամ նուէրով ստացած կալքերի, ինչպէս և դրա-

*) Մի կարգադրութիւն, որ արածուեց և Սիբիրիայում 1898 թ., իսկ Կովկասում պէտք է գործադրուի այս տարւանից:

մական կապիտալի, կալուածքի, արդիւնագործութեան և առևտրի վրայ որոշ հարկի սահմանումով հարկատուութեան մասնակից դառնալ ազգաբնակչութեան ունեւոր խաւերը: Հիմնուեց չինական բանկ, որպէս զի երկրագործի ձեռքը հեշտութեամբ անցնի հողը, որ նրա աշխատանքը գործադրելու գլխաւոր վայրն է: Զեռնարկուեց երկաթուղիների մի անագին ցանց, որով սերտ կապ ստեղծուեց լայնածաւալ պետութեան զանազան մասերի մէջ և յարուծիւն առան երկրի քնած ոյժերը: Երկաթուղիները մասնաւոր անձերի ձեռքից անցան արքունի գանձարանը, դրա չնորհիւ հարստանում էր ոչ անհատը, կապիտալիստը, այլ պետութիւնը, որից շահ ունի բոլոր ազգաբնակչութիւնը: Այդ մի քանի տեղեկութիւններից պարզ է այն ուղղութիւնը, որ մտաւ երկրի ֆինանսական տնտեսութեան մէջ: Ալեքսանդր II-ըզի կարգադրութեամբ 1862 թուից ի գիտութիւն հասարակութեան հրատարակուած է ֆինանսների միւնիստրի պատճառաբանած տարեկան նախահաշիւը, որ հնարաւորութիւն է տալիս ընդհանուր գաղափար կազմել պետութեան ծրագրների մասին, երկրի տնտեսական կեանքի նկատմամբ: Իւրաքանչիւր տարուայ սկզբում, յունուարի 1-ին, հրատարակուած է թագաւոր կայսրին ներկայացրած նախահաշիւը:

Ֆինանսների միւնիստրի վերջին նախահաշուով 1901 տարուայ ընթացքում, ինչպէս այդ աշոգուել է ներկայ միւնիստր Վիտտէին 1888 թուից շարունակ, սովորական եկամուտներ աւելի են սպասուում, քան սովորական ծախքեր:

Սովորական եկամուտ հաշուած է 1,730,096,000 ռ. իսկ սովորական ծախք 1,656,652,556 ռ., այսինքն սովորական մուտքը աւելի է ծախքից 73,4 միլ. ռուբլիով: Այդ յաւելումը գլխաւորապէս առաջ է գալիս խմիչքների արքունական մենաշնորհ վաճառումից և երկաթուղիների տարէցտարի ընդարձակուող ցանցից: Այսինքն արդիւնաբերական և առևտրական երկու ձեռնարկութիւններից, որոնց մասին մենք յիշեցինք մի քիչ առաջ: Սովորական ծախք ենթադրուում է նախորդ տարուանից 92,2 միլիոն աւելի: Դարձեալ գլխաւորապէս վերև յիշած երկու ձեռնարկութիւնների ընդարձակումն և կազմակերպութիւնն է, որ սպասելու են այդ գումարը: Այս տարուանից արդէն ամբողջ Եւրոպական Ռուսաստանում մտցնում է խմիչքների արքունական վաճառումը:

Արտակարգ ծախսերի համար նշանակուած է 131,8 միլիոն ռուբլի, որ համարեա ամբողջապէս գնում է երկաթուղային գործն ընդարձակելու վրայ:

Ընդհանրապէս թէ սովորական և թէ արտակարգ ծախսե-

րի գումարը 1901 տարուայ համար որոշուած է 1,788,482 ուսայսինքն 31 միլիօն աւելի քան անցեալ տարի: Եւ այդ չը նայած որ, ինչպէս յայտնուած է ֆինանսների միջխտրը, նախահաշիւը կազմելիս և քննելիս ի նկատի են առուած բոլոր միջոցները՝ սահմանափակելու համար ծախսերի յաւելումը բոլոր այն դէպքերում, երբ այդ կարելի էր առանց վնասելու պետական շահերը:

Բնականաբար մի երկիր, որ աճում է և զարգանում, չէ կարող պակասեցնել իր ծախսերը, այլ անընդհատ պէտք է այդ ծախսերը աւելանան նորանոր կուլտուրական պահանջները վրայ: Մի քսան տարի առաջ Ռուսաստանի ընդհանուր ծախսը 867,5 միլիօն էր, իսկ այժմ, ինչպէս տեսնում ենք վերև բերածներէից, կրկնապատկուել է: Առհասարակ յիշած թուականից մինչև օրս ծախսը միջին թուով իւրաքանչիւր տարի աւելացել է 54,2 միլ. ուս:

Սակայն պետական անտեսութիւնը, ինչպէս և մասնաւորը, եթէ նպատակ դնէ միայն ծայրը ծայրին հասցնել, ել ու մուտքը ծածկել, արտակարգ մի դէպքի ժամանակ կարող է յանկարծ շատ անել դրութեան մէջ գտնուել: «Ռուսաց կայսրութեան տարածութիւնը, բացատրում է միջխտրը, այնքան մեծ է, նրա մէջ մտնող գաւառները այնքան տարբեր են իրանց կլիմայական և այլ բնական պայմաններով, ազգաբնակչութեան նիստ ու կացով և ապրուստ հայթայթելու աղբիւրներով, որ կառավարութիւնը պէտք է միշտ պատրաստ լինի այս կամ այն պատահարի դէմ: Ո՞րտեղից գտնել միջոցներ ազգաբնակչութեանը օգնութիւն հասցնելու, եթէ անտեսութիւնը վարուել այնպէս, որ ծայրը ծայրին հասցնուել և էլ ոչինչ չը խնայուել սև օրուայ համար: Այդ դեռ ներքին կեանքում: Բայց Ռուսաստանի քաղաքական վիճակը, իբրև տրեւերական մի պետութեան, սերտ կապուած է միւս երկիրների կեանքի հետ: Քաղաքական անաւակալ դէպքերը կարող են պահանջել միջոցներ, որոնք միշտ պէտք է պատրաստ ունենալ ձեռի տակ, որովհետև փոխառութեան դիմելու պայմանները միշտ նպաստաւոր չեն լինում: Անկասկած խնայողութիւն անելու, կամ մի գումար յետ դրելու համար, հարկատուներից պէտք է մի քիչ աւելի վերցնել, բայց դրա փոխարէն տարէցտարի աննկատելի կերպով անում է խնայողութիւն, որ ապահովում է անաւակալ պատահաններից ժողովրդի և պետութեան կեանքը: Այդ խնայած գումարներով կարելի եղաւ, օրինակ, վերջացնել Սիբիրի մեծ երկաթուղին, ուժեղացնել նաւատորմը, նորոգել զօրքի զէնքերը, օգնել ժողովրդին սովի ժամանակ, ծածկել այն ծախքերը, որ պահանջեց չինական բարդութիւնը և այլն»:

Ֆինանսների միւստորը իր նախահաշուի մէջ աշխատում է պարզել և այն թէ ինչո՞ւ վերջին տարուայ ընթացքում երկրի ոսկու քանակութիւնը զգալի կերպով, 74,11 միլ. ու., պակասել է:

Բանն այն է, որ վերջին տարիներս համաշխարհային շուկայում դրամական կապիտալները թանգացել են, որովհետև դրամի պահանջը աւելի էր, քան առաջարկը: Կապիտալների թանգանալով աւելի դժուարացաւ դրամ գտնել նոյն իսկ զեղջումով և փոխառութեամբ: 1898 թուի աշնանը ազատ կապիտալների սակաւութիւնը Եւրոպայում դառաւ շատ զգալի, որ և արտայայտուեց արժէթղթերի գների անկման և զեղջման ու փոխառութեան տոկոսների բարձրացման վրայ: Յաջորդ երկու տարիների ընթացքում դրամային շուկայի այդ նեղուած վիճակը աւելի ևս ծանրացաւ շնորհիւ նոր աննպաստ քաղաքական հանգամանքների:

Չին-եապոնական պատերազմից յետոյ իրերի դրութիւնը Եւրոպայում բաւական մեծ փոփոխութիւններ կրեց. եապոնիայի ստացած պատերազմական բոլոր տուգանքը (կոնտրիբուցիա) վճարուած էր Եւրոպայի դրամային շուկաների միջնորդութեամբ: Այդ շուկաները փոխարինաբար տուին Չինաստանին աւելի քան 450 միլ. ուրըլի: Բացի այդ, խոռվութիւնը թիւրքական Հայաստանում, Կրետէյում, յոյնտաճկական և սպանաւանքիական պատերազմները ձնչող ազդեցութիւն ունեցան դրամական գործերի ընթացքի վրայ: Հարաւ-Աֆրիկայի պատերազմի շնորհիւ ահագին գումարներ դուրս գնացին Եւրոպայից և, ոսկու հանքերի մշակութիւնը դադարելով Տրանսվալում, 30⁰/₀-ով պակասեց համաշխարհային շուկային ոսկու մատակարարումը: Վերջապէս Չինաստանի բարդութիւնները պահանջեցին ահագին դրամական միջոցներ դուրս հանել Եւրոպայից: Վերև յիշած քաղաքական հանգամանքներին պէտք է կցել և այն, որ եւրոպական արդիւնագործութեան արագ աճումը կուլ տուեց ահագին կապիտալներ, եւրոպացի կապիտալիստները հեռու երկիրներում անգամ սկսեցին բազմաթիւ առևտրական, արդիւնագործական և երկաթուղային ձեռնարկութիւններ: Այդ բոլոր պատճառների շնորհիւ Եւրոպայում այժմ ոչ միայն չէ զգացուում ազատ կապիտալների առատութիւն, այլ և նկատելի է ձգտում—կենտրոնացնել իր մէջ և զբաւել ազատ միջոցներ: Դեռ մի քիչ առաջ օտար կապիտալները առատութեամբ թափւում էին մեր երկիրը, այժմ այդ հոսանքը զգալի կերպով թուլացել է և նոյն իսկ յետ նահանջեց կապիտալը մեր երկրից: Մասնաւորապէս էլ Ռուսաստանը Մանջուրիայի երկաթուղու, Կվանտունեան թերակղզու (Պորտ-

Արտուր) ամբացման և պարսկական փոխառութեան վրայ մեծ միջոցներ արտահանեց երկրից: Այդ բոլորին աւելացրէք և վերջին տարիների վատ հունձը, որի չնորհիւ պակասեց Ռուսաստանի արտահանութիւնը և հասկանալի կը դառնան ոսկու քանակութեան նուազման պատճառները:

Հունձի նշանակութիւնը մանաւանդ արժանի է ուշադրութեան. յիշած քաղաքական հանգամանքները ահագին միջոցներ խլեցին և Հիւսիս. Ամեր. Միացեալ-Նահանգներից, բայց մի շարք լաւ հունձների չնորհիւ զօրեղացան այդ երկրի տնտեսական ոյժերը: Արդիւնագործի ամենամեծ յոյսը՝ պէտք է լինի իր բնիկ ժողովրդի գնելու կարողութիւնը. երբ հունձը առատ է, այն ժամանակ բնականաբար աւելանում են ժողովրդի միջոցները. ուրեմն, աւելանում են և ապրանքներ սպառողների թիւը. արդիւնագործութիւնը և առևտուրը ծաղկում են, աճում է և կապիտալը: Այսօր, երբ ամբողջ եւրոպան դրամի սով է զգում—եանկիւնները այնքան առատ ոսկի ունեն, որ կարող են փոխառութիւն տալ եւրոպացիներին: Մինչդեռ մեր երկրում, վատ հունձների չնորհիւ, ժողովուրդը անզօր է գնել մեր՝ արուեստական միջոցներով հիւանդոտ գերաճման հասած արդիւնագործների ապրանքները, ուստի շատ գործարաններ ստիպուած են պակասեցնել, նոյն իսկ դադարեցնել իրանց արդիւնահանութիւնը: Առողջ արդիւնագործութիւնը պէտք է իր հիմքը դնի հասարակ ժողովրդի բարօրութեան վրայ:

Ֆինանսների մինիստրի հրատարակած նախահաշուից կարելի է տեսնել թէ ամենուրեք տիրող սպառնադինութիւնը ինչ ահագին բեռ է ազգերի համար: Անկասկած, երբ բոլոր մեծ պետութիւնները զինուած են, չէ կարող յետ մնալ նրանցից և աշխարհիս ամենալայնածաւալ տէրութիւնը, մանաւանդ երբ նրա Գահակալի խաղասիրական կոչը դեռ մնում է իրագործումից շատ հեռու մի սրբազան իղձ: Այս է պատճառը որ կառավարութիւնը ժողովրդից ստացած միջոցների ահագին մասը ստիպուած է գործադրել երկրի արտաքին պաշտպանութեան վրայ: Սովորական ծախքերի 1,656 միլիոնից 417 միլիոնը յատկացրած է զինուորական և ծովային մինիստրութիւններին, իսկ կուլտուրական կարևոր ծախքերը, այդ ստիպողական միլիտարիզմի չնորհիւ, շատ համեստ թուերով պէտք է բաւականանան: Այդպէս, երկրագործութեան մինիստրութեանն ընկնում է 40 միլիոն, արդարադատութեան՝ 46 միլիոն և ազգային լուսաւորութեան միայն 33 միլիոն: